ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու

և դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին

ԵԴ2/9290/02/24 ք. Երևան
18 Նոյեմբերի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Նաիրա Ավետիսյանս, ծանոթանալով «ԱՎԵՏԻՍ - ԽԵՑԻ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումին.

ՊԱՐԶԵՑ

«ԱՎԵՏԻՍ - ԽԵՑԻ» ՍՊ ընկերությունը դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ «ՀՀ Արարատի մարզի Արարատի համայնքապետարան» -ի՝ ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԱԾՁԲ-24/18 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.08.2024թ. թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.2-րդ ենթակետով կայացված որոշումն անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանք՝ Պատվիրատուի գործողությունն ուղղված բանկին արդեն իսկ գանձված 10 811 000 ՀՀ դրամի չափով գումարը բռնագանձելու անվավեր ճանաչելու, ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԱԾՁԲ-24/18 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.08.2024թ. թիվ 3 արձանագրության 2.1-րդ ենթակետով կայացված որոշումն անվավեր ճանաչելու՝ ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԱԾՁԲ-24/18 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու պահանջների մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում: Նույն հոդվածի 2-րդ մասիհամաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը: Միաժամանակ, ՀՀ Արարատի մարզի Արարատի համայնքապետարանից պետք է պահանջել ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/18 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող Հանձնաժողովի 09.08.2024թ. թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.2-րդ ենթակետով կայացված որոշման և ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/18 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.08.2024թ. թիվ 3 արձանագրության 2.1-րդ ենթակետով կայացված որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.«Ավետիս-Խեցի» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արարատի համայնքապետարանի՝ ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/18 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող Հանձնաժողովի 09.08.2024թ. թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.2-րդ ենթակետով կայացված որոշումն անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանք՝ Պատվիրատուի գործողությունն ուղղված բանկին արդեն իսկ գանձված 10 811 000 ՀՀ դրամի չափով գումարը բռնագանձելու անվավեր ճանաչելու, ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/18 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.08.2024թ. թիվ 3 արձանագրության 2.1-րդ ենթակետով կայացված որոշումն անվավեր ճանաչելու՝ ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/18 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

2.ՀՀ Արարատի մարզի Արարատի համայնքապետարանից պահանջել դատարան ներկայացնել ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/18 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող Հանձնաժողովի 09.08.2024թ. թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.2-րդ ենթակետով կայացված որոշման և ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/18 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.08.2024թ. թիվ 3 արձանագրության 2.1-րդ ենթակետով կայացված որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող ՀՀ Արարատի մարզի Արարատի համայնքապետարանի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4.Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թվականի դեկտեմբերի 17-ին:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան

Digitally signed by AVETISYAN NAIRA 7501660379
Date: 2024.11.18 14:14:44 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am